Պատմութիւնը կը վկայէ որ՝ Գենուացիք այն երկերիւր տարուան միջոցին, մէկ կողմանէ ամրակուռ բերդեր չինել են, հեռաւոր արևելքէ բերած ապրանքներն ապահովելու համար, միւս կողմանէ անդադար յետ մղել են այն բերդերուն վերայ յարձակող թշնամիքը։ Զի նոցա վերայ միշտ նախանձու աչք նայել են, տիրող և դրացի ազգերը, որք հուսկ յետոյ հասած են իրենց վախճանին կործանելով և աւերելով երկու Գենուացի ծովահայեաց և գեղեցկագիր քաղաքները՝ Սոլդայա և Կաֆա, որոց բարօրութիւնը, Գենուացւոց կառավարութեան ժամանակ ծաղկեալ և նախանձելի եղած է։

Այլ մեք խօսիմք Գենուացւոց աշակից Անեցի Հայկազանց վերայ, որ և է նպատակ մեր այս գրութեան։

Զ

ԱՆԵՑԻ ՀԱՅԿԱԶՈՒՆՔ Ի ՏԱՒՐԻԱ

Խնդրովս՝ թէ երբ արդեօք Հայկազունք անցել են ի Տաւրիա, ազգային հեղինակներէ առաջ, պարապել են օտարք։

Նախընթաց դարուս վերջերը թերակղզիս մարզ լինելով Ռուսաց պետութեան, կայսրուհին Կատարինէ Բ. նման Արշակունւոյն Վաղարշակայ, կը ցանկայ գիտել նոր նուաճած աշխարհին և նորա մէջ բնակող ազգաց պատմութիւնը, կամ ըստ բացատրութեան Խորենացւոյ, «կամ եղև գիտել սորա (Կատարինեայ) թէ ոյք և որպիսի արք տիրեալ են ի վերայ աշխարհիս,... զքաջաց արդեօք,